անցյալի կենցաղի մի շարք առանձնահատկություններին, որոնք մասամբ իրենց զուգահեռներն են ունեցել նաև հին Հայաստանում։

Գրքին կցված է խմբագիր Կ. Մելիք-Օհանջանյանի առաջաբանը։

Տպագրության է հանձնված «XVII—XVIII դարերի հայ աշուղներ» ընդարձակ ժողովածուն, որը կազմել է բանաս. դիտ. թեկնածու Հ. Սահակյանը։

Աշխատանքը պարունակում է XVII—XVIII դարերի հայ աշուղների այն բոլոր հայերեն երկերը, որոնք հնարավոր է եղել գտնել մեր գրադարանա-արխիվային և ձեռագրային ֆոնդերում։ Ժողովածուի մեջ մտնում են 32 աշուղի երկեր։

Հրատարակվող նյութերից ցայժմ չեն տպագրվել և առաջին անգամ են հրատարակվում 15 բանաստեղծություն։ Բացի այդ, նյութերի կեսից ավելին վերցված է ձեռագրային սկզբնաղբյուրներից և համեմատված տպագիր և այլ ձեռագրային օրինակների հետ, այսինքն բոլոր անհրաժեշտ դեպքերում կազմված են համեմատական տեքստեր։

Այն բանաստեղծությունների մեծ մասը, որոնք տպագրված են եղել մինչ սույն ժողովածուն, ցրված են այնպիսի պարբերականներում («Սիոն», «Շտեմարան», «Հումա», «Բազմավեպ» և այլն) և այնպիսի ժողովածուներում, որոնք այսօր հազվագյուտ են ու անմատչելի լայն հասարակայնությանը։

Ժողովածուն ունի ներածություն-ուսումնասիրություն, ուր վերլուծված ու գնահատված են XVII—XVIII դարերի հայ աշուղների երկերը, ինչպես նաև ընդարձակ ծանոթագրություններ, բառարան և այլն։

Պատրաստ է նաև Մ. Աբեղյանի գրականքննադատական ու հրապարակախոսական հոդվածների ստվարածավալ ժողովածուն։ Մ. Աբեղյանը ոչ միայն լեզվագետ էր, ֆոլկլորիստ, տաղաչափության մասնագետ ու հին գրականության պատմաբան, այլև քննադատ ու հրապարակախոս։ Ժողովածուն պարունակում է մեծ հայագետի պարբերականներում ցրված հոդվածներն ու գրախոսականները հայ ժողովրդական բանահյուսության, հայ հին և նոր գրականության, արևմտաեվրոպական և արևելյան գրականությունների, գրական դպրոցների, պոետիկայի այլևայլ խնդիրների վերաբերյալ։

Սեկտորում պատրաստվում են նաև հատուկ հետազոտություններ Ներսես Շնորհալու կյանքի և ստեղծագործության, հայ-իրանական գրական կապերի մասին։

Սեկտորի աշխատակիցները պարբերաբար մասնակցում են «Տեղեկագրին» և «Պատմա-բանասիրական հանդեսին», գործուղվում են Մոսկվա, Լենինգրադ, Թբիլիսի, Բաքու և այլուր՝ լրացնելու իրենց գիտելիքները կամ աշխատանք կատարելու իրենց թեմաների շուրջը։ 1958 թվականի ընթացքում պաշտպանվել է երեք թեկնածուական դիսերտացիա։

Իր 7-ամյա պլանով սեկտորը նպատակ է դրել նոր նյութերի և հետազոտությունների հիման վրա պատրաստելու հայ հին և միջնադարյան գրականության ընդարձակ պատմությունը։

Խ. ԱԼԻԽԱՆՅԱՆ

ՊԱԼԵՈԼԻԹՅԱՆ ԼԱՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՍԻՍՈՒՄ

Դեռևս 1952 թ. երկրաբան Ա. Տ. Ասլանյանը Նոյեմբերյանի շրջանում ուսումնասիրությունների ժամանակ պատահաբար գտել էր քարե գործիք, որը հետագայում հրատարակվեց Ս. Սարդարյանի կողմից[1]։

Հայտնաբերված գործիքը գտնվել էր Դեասի-բար կոչվող հանդամասում, Դիյլիկ (Կայլիկ) անուն կրող բլրի վրա, որի բարձրությունը ծովի մակերևույթից հասնում է 730 մետրի։

Դիյլիկի ողջ մասսիվը կազմված է վերին կավճային շրջանի կրակավերից և կրաքարերից, որոնց տակ գտնվում են թուրոնանտոնյան հասակի հրաբխային ապարներ։ Հայտնաբերված իրն իրենից ներկայացնում է կանաչավուն հասպիսից (яшма) պատրաստված սրածայր գործիք (остроконечник), 8 սմ երկարությամբ և հիմքում՝ 4,5 սմ լայնությամբ[1]։

Գործիքի աջ մասը (սայրը) սուր է, իսկ ձախը բութ։

Պալեոլիթյան գործիքի այս գյուտը մեզ դրդեց նաև դիտել Դիյլիկի շուրջը գտնվող բարձրությունները։

Այս տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Դիյլիկից 800 մ հեռավորության վրա գտնվող Դեասի-բար կոչվող բարձրությունը համանուն քարայրով։

Քարայրը բնական է և կավճային հասակի ծագում ունի։ Նրա երկարությունը կազմում է

[1] С. Сардарян. Палеолит в Армении, Ереван, 1954.

[1] Նույն տեղում, էջ 109—114, տախտակ XXX, նկ. 2а։



Նկ. 1. Ղեասի-քար քարայրի հատակագիծը



Նկ. 2. Դիյլիկ և Ղեասի-քար բարձունքների վրա գտնված պալեոլիթյան քարե գործիքները

մոտ 20—22 մ, իսկ լայնությունը որոշ տեղերում հասնում է 3—5 մետրի (նկ. 1)։

Քարայրի մուտքից 20—30 մետր հեռավորության վրա հաջողվեց գտնել կրաքարից պատրաստված գործիք (նկ. 2)։ Գործիքը նշաձև ձեռքի հատիչ է, ունի 13 սմ երկարություն և 6 սմ լայնություն՝ հիմքում։ Հատիչի ձախ մասը սուր է, իսկ աջը՝ քիչ բութ։

Ղեասի-քարի ստորոտում գտնվեց ևս երկու գործիք, մեկը՝ կրաքարից, մյուսը՝ խալցեդոնից։

Առաջին գործիքը ձեռքի ձվաձև հատիչ է 17 սմ երկարությամբ, հիմքում՝ 7 սմ լայնությամբ։

Խալցեդոնից պատրաստված գործիքը կեսից կոտրված սրածայր հատիչ է, հիմքում 3,5 սմ լայնությամբ։

Հայտնաբերված գործիքների այդքան մոտ գտնվելը քարայրին, հնարավորություն է տալիս ասելու, որ Ղեասի-քար քարայրը պալեոլիթյան կայան է և կարելի է թվագրել ուշ աշելյով կամ մուստյեով։[1]

Ղեասի-քարը պետք է դառնա հետագա ուսումնասիրությունների վայր։

Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

[1] Ս. Սարդարյանը Ա. Ասլանյանի կողմից գտնված գործիքը թվագրում է մուստյեր ժամանակաշրջանով։